զած հարստութեան արդիւնքով շինուած են Առաջնորդարանի շէնքը և Միլլիթ խան ըսուած կալուածը Այնթապի մէջ։

ՅՈՎՍԷՓ ՎԿԱՅ ԴՈՒԻՆՑԻ.— Հին անունը Ապու պէքիր. ծագումով պարսիկ. քրիստոնէութիւնը ընդունելով կը մկրտուի. Հաղբատ և Սանահին վանքերու այցելութենէն վերջ ուխտաւորութեամբ կ'այցելէ Երուսաղէմ և յետոյ կը դառնայ հայրենիք և 1170ին ալ կը նահատակուի Դուինի Սատրբճիհան ամիրայապետէն և մարմինը կ'ամփոփուի Այրի վանքին մօտ (Գառնի) Սարգիս ճգնաւորին ձեռքով։ Սոյն վկային ներբողեանը շարադրած է Դաւիթ քհ. ի խնդրոյ Մխիթար անուն մէկու մը։ Յովսէփ կը կոչուի նաև նոր վկայ (Շնորհ. էջ 389—396)։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ԲԵՐԱՑԻ.— Մբ. 1782ին Յովակիմ պտրք. Քանաքեռցիին կը նուիրէ վարդապետական գեղեցիկ գաւազան մը հետևեալ յիշատակարանով. «Ի վայելումն Յովակիմայ երջանիկ պտրք.ի Երուսաղէմի յիշատակ է գաւազանս Բերացի Յովսէփ վարդապետի և իւր ծնողացն ի դուռն Սրբոյն Յակոբայ. ընկալցի տէրն ի հաճոյս բարերար կամաց յանաչառ ողորմութեան իւրոյ ամէն.

Թվին հազար երկու հարիւր երեսուն և մէկ» (=1782)։

ՅՈՎՍԷՓ (Հ) ՎՐԴ. ԳԱԹԸՐՃԵԱՆ.— Մբ. Վիեննայի Մխիթարեան վանքին. Ծ. 1820ին. Զռ. 1841ին. (✱1882)։ 1866ին ձեռագիրներու ուսումնասիրութեան համար կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (Սիօն. 1866. էջ 94)։ Հրատարակած է պատմ. և բանասիրական գործեր։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ.— Մբ. կնիքը 1751. Լսպ. (1751 — 1774?). կը յաջորդէ Լսպ. Աստուածատուր վրդ.ի. Ս. Յակոբի վանքին յիշատակ թողած է ոսկեզօծ սկիհ մը, եւ քառաթև խաչ մը Եյլն։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ԹԻՖԼԻՍՑԻ.— Մբ. 1860ին։

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ, (ԵՐԱԺԻՇՏ).— Մբ. Ս. Էջմիածնի. Ծ. 1889ին. աւազանի անունը Գառնիի. աշկ. Գուրուչէշմէի Թարգմանչաց վարժ.ին. հետևած է նաև Պոլսի Կալաթա Սարայի Լիսէին, և ստացած է դեղագործի վկայական 1911 ին. 1919ին Երևան կը մեկնի և Էջմիածնի ճեմարանին մէջ բացուած Ամերիկեան Հիւանդանոցին մէջ կը կարգուի գլխաւոր դեղագործ։